

ԱՐՔԻՏՐՆԵՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԱՐՔԻՏՐԱԺՈՒՄ

Փառանձեմ Միքայելյան

*ՀՀ վարչապետի աշխատակազմի միջազգային
արբիտրաժներում և այլ միջազգային դատարաններում
ՀՀ շահերի պաշտպանության վարչության ավագ մասնագետ*

Արբիտրաժը վեճերի լուծման այլընտրանքային, արտադատական եղանակ է, որի նպատակն է առանց անհարկի ծգծումների կամ ծախսերի ստանալ *անկողմնակալ արբիտրաժային տրիբունալի կողմից* վեճերի արդարացի լուծում: Նշվածը որպես արբիտրաժի իրականացման ընդհանուր սկզբունք ամրագրված է «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասում:

Արբիտրաժային տրիբունալի (արբիտրների կազմի, կազմի մեջ մտնող արբիտրներից որևէ մեկի կամ միանձնյա արբիտրի) անկողմնակալությունն արբիտրաժային վարույթի առանցքային բաղադրիչներից է, քանի որ արբիտրաժային վճիռները վերջնական են և ըստ էության բողոքարկման ենթակա չեն: Արբիտրաժային վճիռների չեղյալ ձանաչումը կամ դրանց ձանաչումը և կատարումը մերժելը հնարավոր են միայն բացառիկ դեպքերում ու Օրենքով սահմանված սահմանափակ հիմքերով (գլուխներ 7-րդ և 8-րդ):

Սույն աշխատանքում մասնավորապես քննարկվում են արբիտրաժային տրիբունալի անկողմնակալության, ինչպես նաև կողմերի համաձայնությամբ վերջին(ներ)իս ներկայացվող պահանջներին (որակավորման, փորձառության, որոշակի տեխնիկական գիտելիքների տիրապետման և այլն) չհամապատասխանելու իրավական հետևանքները: Այս կապակցությամբ առավել խնդրահարույց իրավիճակ է առաջանում այն դեպքում, երբ արբիտրի անհամապատասխանության հանգամանքը կողմին հայտնի է դառնում ոչ թե արբիտրաժային վարույթի ընթացքում, այլ դրա ավարտից հետո: Այսպիսով, աշխատանքի շրջանակներում քննարկվում են ինչպես արբիտրաժային վարույթի ընթացքում արբիտրին բացարկ հայտնելու իրավական եղանակներն ու առանձնահատկություններն, այնպես էլ արբիտրաժային վարույթի ավարտից և վերջնական վճիռը կայացնելուց հետո արբիտրի իրավասության բացակայության հիմքով արբիտրաժային տրիբունալի վճիռը չեղյալ ձանաչելու կամ վճիռի ձանաչումը և կատարումը մերժելու իրավական հնարավորությունները:

Թեման լուսաբանվում է Օրենքի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի, «Օտարերկրյա արբիտրաժային որոշումների ձանաչման և կատարման մասին» Նյու Յորքի կոնվենցիայի (այսուհետ՝ «Նյու Յորքի կոնվենցիա») համապատասխան կարգավորումների վերլուծության, ինչպես նաև միջազգային փորձի և հայտնի գիտնականների կարծիքների հիման վրա:

1. Արբիտրին բացարկ հայտնելու իրավական կարգավորման առանձնահատկությունները

Արբիտրին բացարկ հայտնելու հիմքերը և ընթացակարգը քննարկելու համար նախ անհրաժեշտ է դիտարկել Օրենքի ստորև հիշատակված կարգավորումները.

Հոդված 12. Բացարկ հայտնելու հիմքերը

2. Արբիտրին բացարկ կարող է հայտնվել միայն այն դեպքում, եթե առկա են հանգամանքներ, որոնք հիմնավոր կասկած են առաջացնում նրա անկողմնակալության կամ անկախության վերաբերյալ, կամ նա չունի կողմերի համաձայնությամբ սահմանված համապատասխան որակավորում:

Հոդված 13. Բացարկման ընթացակարգը

1. Կողմերը իրենց հայեցողությամբ և սույն հոդվածի 3-րդ մասի դրույթների պահպանմամբ կարող են համաձայնվել արբիտրի բացարկման ընթացակարգի վերաբերյալ:

2. Նման համաձայնության բացակայության դեպքում արբիտրին բացարկ հայտնելու մտադրություն ունեցող կողմը պարտավոր է արբիտրաժային տրիբունալի ձևավորման կամ սույն օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասում նշված որևէ հանգամանքի մասին իրեն հայտնի դառնալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, արբիտրաժային տրիբունալ ուղարկել գրավոր բացարկ՝ բացարկի հիմքերի շարադրմամբ: Եթե արբիտրը, որին բացարկ է հայտնվել, ինքնաբացարկ չի հայտնում, կամ մյուս կողմը չի համաձայնվում բացարկին, ապա բացարկի հարցը որոշում է արբիտրաժային տրիբունալը:

3. Եթե կողմերի համաձայնեցրած կամ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով հայտնված բացարկը մերժվում է, ապա բացարկ հայտնած կողմը բացարկի մերժման մասին որոշումը ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, կարող է դիմել սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված դատարան՝ բացարկի վերաբերյալ որոշում ընդունելու խնդրանքով, որի կայացրած ակտը բողոքարկման ենթակա չէ: Քանի դեռ կողմի նման դիմումի վերաբերյալ որոշում ընդունված չէ, արբիտրաժային տրիբունալը, ներառյալ՝ այն արբիտրը, որին բացարկ է հայտնվել, կարող է շարունակել արբիտրաժային վարույթը և վճիռ կայացնել:

Հոդված 4. Առարկելու իրավունքից հրաժարվելը

1. Եթե կողմին հայտնի է, որ սույն օրենքի որևէ դրույթ, որի կիրառումը իրենց նկատմամբ կողմերը կարող են սահմանափակել, կամ արբիտրաժային համաձայնության որևէ պահանջ չի պահպանվել, և, այդուհանդերձ, կողմը շարունակում է արբիտրաժային վարույթը՝ չհայտնելով իր առարկությունները այդպիսի չպահպանման վերաբերյալ առանց անհարկի ձգձգման, կամ այդպիսի առարկություն ներկայացնելու համար կոնկրետ ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ այդ ժամկետի ընթացքում, ապա համարվում է, որ տվյալ կողմը հրաժարվել է առարկություն ներկայացնելու իր իրավունքից:

Այս պահանջն ունի երկակի գործնական նշանակություն. *նախ*, եթե արբիտրին ավելի ուշ է բացարկ հայտնվում, և վերջինս ավելի ուշ է լքում վարույթը, ապա նրա փոխարեն ներգրավված արբիտրին ժամանակ է պետք գործի նյութերին ծանոթանալու համար, արդեն իսկ լուծման անցկացված լինելու դեպքում անհրաժեշտ է կրկին լուծման անցկացնել նոր արբիտրի մասնակցությամբ, որոնք անհարկի ավելացնելու են արբիտրաժային ծախսերը ու ձգձգելու են վեճի լուծումը, իսկ դա հակասում է արբիտրաժի՝ վեճերն արագ և արդյունավետ լուծելու սկզբունքին: *Երկրորդ*, առարկությունն առաջին իսկ հնարավորության դեպքում ներկայացնելն անհրաժեշտ է այն տեսանկյունից, որ հետագայում՝ վճիռ չեղյալ ճանաչման, կատարման և կատարման փուլերում, դատարանը չհամարի, որ կողմը, ժամանակին ա-

ռարկություն չներկայացնելու պատճառով, հրաժարվել է առարկելու իրավունքից¹: Այսինքն՝ եթե կողմը շարունակել է արբիտրաժային վարույթը՝ չհայտնելով իր առարկությունները, ապա համարվում է, որ տվյալ կողմը հրաժարվել է առարկություն ներկայացնելու իր իրավունքից՝ Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումների լույսի ներքո: Ընդ որում, այն հանգամանքը, որ արբիտրոն ի վնաս որևէ կողմի վճիռ է կայացրել, չի նշանակում, որ վերջինս անկախ կամ անկողմնակալ չի եղել կամ բավարար գիտելիքներ չի ունեցել:

գ) Բացարկման ընթացակարգի առնչությամբ Օրենքը, հիմք ընդունելով արբիտրաժում կողմերի կամքի ինքնավարության սկզբունքը, առաջնայնությունը տալիս է այն ընթացակարգին, որի շուրջ համաձայնվել են կողմերը: Նման համաձայնության բացակայության դեպքում՝ Օրենքը սահմանում է արբիտրաժային տրիբունալ գրավոր բացարկ ուղարկելու հնարավորություն: Եթե արբիտրը, որին բացարկ է հայտնվել, ինքնաբացարկ չի հայտնում, կամ մյուս կողմը չի համաձայնվում բացարկին, ապա բացարկի հարցը որոշում է արբիտրաժային տրիբունալը: Եթե տրիբունալը բացարկը մերժում է, ապա բացարկ հայտնած կողմը կարող է դիմել արբիտրաժի գտնվելու վայրի դատարան՝ բացարկի վերաբերյալ որոշում ընդունելու խնդրանքով,

դ) բացարկի առնչությամբ դատարանը կողմի դիմումի հիման վրա կարող է ցուցաբերել ակտիվ աջակցություն և միջամտություն՝ բացարկի դիմումը բավարարելու կամ մերժելու ձևով: Ընդ որում, դատարանի համապատասխան որոշումը պարտադիր է արբիտրաժային տրիբունալի համար ու բողոքարկման ենթակա չէ: Արբիտրաժային վարույթին դատական միջամտությունը տեղի է ունենում բացառիկ դեպքերում², ու, փաստորեն, բացարկի հարցով դատական միջամտությունը նման բացառիկ դեպքերից է,

ե) մինչ բացարկի հարցը քննվում է դատարանում, արբիտրաժային տրիբունալը կարող է շարունակել արբիտրաժային վարույթը և վճիռ կայացնել: Հնարավոր է կարծել, որ էթիկայի տեսանկյունից ավելի ընդունելի կլինի, որպեսզի տրիբունալը կասեցնի գործի քննությունը և սպասի դատարանում բացարկի հարցի քննության արդյունքներին: Այդուհանդերձ, հաշվի առնելով, որ *Amfu*, բացարկի հարցն արդեն իսկ համապատասխան արբիտրի ու արբիտրաժային տրիբունալի կողմից քննվել է, և *երկրորդ*, որ բացարկ հայտնած կողմը կարող է անբարեխիղճ գտնվել՝ հետապնդելով գործի լուծումը ձգձգելու նպատակ, քննարկվող իրավակարգավորումները թույլ են տալիս արբիտրաժային տրիբունալին գործը շարունակել:

Գործը շարունակելու դեպքում առաջանում է այն հարցադրումը, թե ինչ կպատահի այն պարագայում, երբ բացարկի վերաբերյալ որոշում դատարանի կողմից դեռևս չի կայացվել, սակայն արբիտրաժային տրիբունալն ըստ էության լուծել է վեճը: Այս տեսանկյունից կարելի է քննարկել հետևյալ հնարավոր զարգացումները՝ ելնելով նրանից, որ արբիտրաժի վայրի դատարանը, որտեղ քննվում է բացարկի հարցը, և այն դատարանը, որտեղ ներկայացվել է վճիռ ձևանաչման և կատարման դիմումը, չեն համընկնում:

1. Վճիռն արդեն կայացվել է, ներկայացվել է ձանաչման և կատարման համար, մինչդեռ բացարկի հարցը արբիտրաժի վայրի դատարանում դեռևս չի լուծվել: Մի կողմից, բացարկի հարցը քննող դատարանի համար առաջանում է երկընտրանք՝ շարունակել արդյոք քննել բացարկի հարցը, թե՞ դադարեցնել վարույթը՝ հաշվի առնելով, որ արբիտրաժային վարույթն ավարտվել է, վճիռը՝ կայացվել:

¹ Տե՛ս, օրինակ, Նյու Յորքի կոնվենցիայի ուղեցույցում մատնանշված հետևյալ գործերը՝ https://newyorkconvention1958.org/index.php?lvl=notice_display&id=2265

² Համաձայն Օրենքի 5-րդ հոդվածի՝ արգելվում է որևէ դատական միջամտություն սույն օրենքով կարգավորվող հարցերին, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

Մյուս կողմից, նման երկրնտրանք առաջանում է նաև ճանաչման և կատարման հարցը քննող դատարանի համար՝ կասեցնել՝ վարույթը ու սպասել մինչև դատարանը բացարկի վերաբերյալ որոշում կայացնի, թե՞ անկախ նման որոշումից լուծել վճռի ճանաչման և կատարման հարցը,

2. վճիռն արդեն կայացվել է, ներկայացվել է ճանաչման և կատարման համար, և դատարանը որոշում է կայացրել կասեցնել վարույթը՝ մինչև բացարկի հարցը քննող դատարանը վերջնական որոշում կայացնի, իսկ այնուհետ շարունակել է վարույթը, կամ բացարկի հարցն արբիտրաժի վայրի դատարանում լուծվել է զուգահեռաբար: Այս դեպքում ևս ճանաչման և կատարման դատարանը պետք է կայացնի այլընտրանքային որոշումներից որևէ մեկը. կա՛մ առաջնորդվի արբիտրաժի վայրի **դատարանի որոշմամբ**, որ, օրինակ, համապատասխան արբիտրն իրավասու էր լուծելու վեճը, կա՛մ առաջնորդվի **արբիտրաժային տրիբունալի որոշմամբ**, ըստ որի՝ արբիտրն իրավասու էր, կա՛մ էլ համապատասխան հիմքերի առկայության դեպքում արբիտրի իրավասության հարցով իրականացնի **de novo քննություն**:

Մինչև 2018 թ. հայկական օրենսդրությամբ հարցը կարգավորված չէր: Այդ տարվա ապրիլի 9-ին ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը վերը քննարկված խնդրի առնչությամբ առաջարկում է հետևյալ լուծումը.

Հոդված 334. Դիմումի քննությունը

3. Եթե արբիտրի բացարկի կամ արբիտրաժի իրավասության մասին որոշում ընդունելու վերաբերյալ դիմումի քննության ընթացքում պարզվում է, որ արբիտրաժը կայացրել է վեճն ըստ էության լուծող վճիռ, ապա **դիմումը թողնում է առանց քննության**՝ արբիտրաժում վարույթն ավարտելու հիմքով: Դիմումն առանց քննության թողնելու դեպքում արբիտրաժային վարույթի մասնակիցը, որը ներկայացրել է աջակցության վերաբերյալ դիմումը, արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու կամ արբիտրաժի վճռի հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմումի քննության ընթացքում չի զրկվում աջակցության վերաբերյալ դիմումի հիմքում դրված հանգամանքները վկայակոչելու իրավունքից:

Այսպիսով, եթե արբիտրաժային վճիռը կայացվել է, ապա բացարկի հարցը քննող արբիտրաժի վայրի դատարանը դիմումը թողնում է առանց քննության՝ ելնելով նրանից, որ արբիտրաժային վարույթն ավարտվել է: Միաժամանակ, հիշատակված նորմը շահագրգիռ կողմին տալիս է բացարկման դիմումի հիմքում դրված հանգամանքները (արբիտրի անկախությունը, անկողմնակալությունը, որակավորումը) վճիռը չեղյալ ճանաչելու կամ ճանաչման և կատարման վարույթներում վկայակոչելու հնարավորություն:

2. Արբիտրի իրավասության բացակայության հիմքով արբիտրաժային վճռի չեղյալ ճանաչումը կամ ճանաչման և կատարման մերժումը

Վճիռը չեղյալ ճանաչելու և ճանաչման ու կատարման վարույթների առանձնահատկությունները սահմանված են Օրենքի 7-րդ և 8-րդ գլուխներում: Ընդ որում, արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու հիմքերը նման են ճանաչման ու կատարման մերժման հիմքերին, իսկ վերջիններս համընկնում են Նյու Յորքի կոնվենցիայով սահմանված մերժման հիմքերի հետ¹:

Համապատասխան հոդվածների վերլուծությունից բխում է, որ վճռի չեղյալ ճանաչման, ինչպես նաև ճանաչման և կատարման մերժման սպառիչ հիմքերն ուղ-

¹ Հայաստանի Հանրապետության դեպքում ուժի մեջ է մտել 1998թ. մարտի 29-ին:

ղակիորեն չեն ներառում արբիտրի անկախությունը, անկողմնակալությունը և որակավորման անհամապատասխանությունը: Հետևաբար, խնդիր է առաջանում պարզելու, թե վճռի չեղյալ ճանաչման և ճանաչման ու կատարման մերժման գոյություն ունեցող հիմքերից որոնց ներքո է հնարավոր վկայակոչել նշված դեպքերով արբիտրի իրավասության բացակայությունը: Ըստ այդմ կարելի է առանձնացնել հետևյալ հիմքերը.

- *կողմը պատշաճ ձևով տեղեկացված չի եղել արբիտրի նշանակման կամ արբիտրաժի մասին կամ այլ պատճառներով զրկված է եղել իր գործը ներկայացնելու հնարավորությունից¹:*

Այս դրույթը կոչված է գործնականում ապահովելու արդար և մրցակցային դատավարության հիմնարար սկզբունքի կիրառելիությունը: Տվյալ պարագայում քննարկվող դրույթի երկրորդ (ընդգծված) մասի հիման վրա վճռի ճանաչումը և կատարումը մերժելու տրամաբանությունն այն է, որ եթե արբիտրն անկախ չի եղել և կողմերից որևէ մեկի նկատմամբ ունեցել է կանխակալ վերաբերմունք, ապա կողմը զրկվել է իր գործը ներկայացնելու հնարավորությունից: Այլ կերպ ասած, կողմն իրական հնարավորություն չունի ներկայացնելու իր փաստարկները և հիմնավորումները, եթե արբիտրը, մինչույն է, չի լսում նրան²: Հարկ է նկատել սակայն, որ վեճերի մեծամասնության պարագայում արբիտրի անկախության և անկողմնակալության առկայությունը հավաստող ոչ բավարար ապացույցների պատճառով դատարաններն այս հիմքով վճիռը չեղյալ ճանաչելու, ինչպես նաև ճանաչումն ու կատարումը մերժելու պահանջը չեն ընդունել³,

- *արբիտրաժային տրիբունալի կազմը կամ ընթացակարգը չի համապատասխանել կողմերի արբիտրաժային համաձայնությանը կամ նման համաձայնության բացակայության դեպքում չի համապատասխանել վճռի կայացման երկրի օրենսդրությանը⁴:*

Նյու Յորքի կոնվենցիայի այս դրույթը նախատեսում է ավելի առաջադիմական կարգավորում, քան նախորդող՝ 1927 թ. ժնևի «Օտարերկրյա արբիտրաժային վճիռների կատարման մասին կոնվենցիայի» համապատասխան դրույթը⁵: Վերջինս նախատեսում էր, որ վճիռը պետք է համապատասխանի միաժամանակ և՛ արբիտրաժային համաձայնությանը, և՛ արբիտրաժի վայրի օրենքին, որպեսզի անխոչընդոտ կերպով ճանաչվի և կատարվի: Դրա համեմատությամբ Նյու Յորքի կոնվենցիան առաջնայնությունը տալիս է արբիտրաժային տրիբունալի կազմի և ընթացակարգի շուրջ կողմերի համաձայնությանը և համապատասխան երկրի օրենսդրության կիրառելիությունը ստորադասում կողմերի համաձայնությանը: Այսպիսով, եթե արբիտրը չի համապատասխանել կողմերի համաձայնությամբ նախանշված անկախության, անկողմնակալության, որակավորման չափանիշներին, այս հիմքը հնարավորություն է տալիս համապատասխան հանգամանքների վկայակոչմամբ պահանջել վճիռը չեղյալ ճանաչել և/կամ վճռի ճանաչումը ու կատարումը մերժել: Հարկ է ընդգծել, որ այս դեպքում դատարանը պետք է ելնի արբիտրների անկախության,

¹ Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետի «բ» ենթակետ, Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետ, Նյու Յորքի կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետ:

² Gary B. Born. International Commercial Arbitration, Kluwer Law International 2014, Second edition, p. 3525.

³ Տե՛ս թիվ 9 հոդումը:

⁴ Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետի «դ» ենթակետ, Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «դ» ենթակետ, Նյու Յորքի կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետ:

⁵ Տե՛ս հոդված 1-ի (c) մաս:

անկողնակալության և որակավորման առնչությամբ ոչ թե վերացական պատկերացումներից, այլ կողմերի հստակ մատնանշած չափանիշներից,

- *վճռի ճանաչումը կամ կատարումը հակասում է Հայաստանի Հանրապետության հանրային կարգին*¹:

Այս հիմքի կիրառման տրամաբանությունն այն է, որ արբիտրի՝ անկախության, անկողնակալության պահանջներին չհամապատասխանելու հանգամանքը հակասում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հանրային կարգին և ինպերատիվ կարգավորումներին: Ընդ որում, սա գործնականում ամենատարածված, սակայն ապացուցման բարդությամբ և դատարանների կողմից մերժման այս հիմքի սահմանափակ կիրառությամբ պայմանավորված եզակի բավարարվող հիմքն է²:

Թեմայի առնչությամբ հայկական օրենսդրական կարգավորումները կամ ավելի շուտ՝ կարգավորումների բացակայությունն ըստ էության համապատասխանում են ՄԱԿ-ի միջազգային առևտրային իրավունքի հարցերի հանձնաժողովի տիպային օրենքին ու միջազգային մակարդակով առավել լայն տարածում ունեցող մոտեցումներին ու պայմանավորված են մի շարք հանգամանքներով.

ա) արբիտրաժային վարույթի ընթացքում արբիտրին բացարկ հայտնելն ու վերջինիս վարույթից հեռացնելն ավելի դյուրին են, քան նրա մասնակցությամբ արդեն իսկ կայացված վճռի չեղյալ ճանաչումը և ճանաչումն ու կատարումը մերժելն այն պատճառաբանությամբ, որ բացարկն ուղղված է մեկ արբիտրի, իսկ վճռի չեղյալ ճանաչումը և ճանաչումն ու կատարումը մերժելը՝ մի ամբողջ արբիտրաժային տրիբունալի կոլեկտիվ որոշմանը: Որոշ գործերով դատարաններն արբիտրի անկախության, անկողնակալության բացակայության և որակավորման անհամապատասխանության հիմքով վճռի չեղյալ ճանաչման և ճանաչման ու կատարման հարցը լուծելիս շեշտել են այն հանգամանքը, որ վճիռը կայացվել է արբիտրների կազմի մեջ մտնող բոլոր արբիտրների կողմից՝ միաձայն³: Թեև այս վերլուծությունը չպետք է օգտագործվի որպես արբիտրի անկախության, անաչառության բացակայության և որակավորման անհամապատասխանության «ներման» հիմք, այդուհանդերձ կարևոր է դիտարկել, թե արբիտրի ենթադրյալ կողմնակալությունը կամ որակավորման անհամապատասխանությունը որքանով է ազդել տրիբունալի կոլեկտիվ որոշման վրա:

բ) Եթե բացարկի դեպքում բավարար է ցույց տալ, որ գոյություն ունի հիմնավոր կասկած արբիտրի անկախության վերաբերյալ, դա բավարար չէ վճռի չեղյալ ճանաչման և ճանաչման ու կատարման ժամանակ: Որոշ դատավորների կարծիքով՝ արբիտրի անկախության բացակայությունն ապացուցելը առանձնակի բարդանում է վճռի չեղյալ ճանաչման և ճանաչման ու կատարման փուլերում: Մասնավորապես՝ դիմող կողմը պետք է ներկայացնի հստակ ապացույց(ներ) առ այն, որ արբիտրը ցուցաբերել է անընդունելի կողմնակալությունը, որն էական ազդեցություն է ունեցել արբիտրաժի ամբողջ կազմի որոշման վրա⁴:

¹ Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետի «բ» ենթակետ, Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «բ» ենթակետ, Նյու Յորքի կոնվենցիայի 5-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետ:

² **Ջորջ Ա. Բերման**, «Օտարերկրյա արբիտրաժային վճիռների ճանաչումը և կատարումը. ներպետական դատարանների կողմից Նյու Յորքի կոնվենցիայի մեկնաբանումը և կիրառումը», Springer International Publishing AG 2017, էջ 60, 122-125, 179-180 և այլն:

³ Տե՛ս **Gary B. Born**. International Commercial Arbitration..., էջ 3590:

⁴ Տե՛ս, օրինակ, Դրեզդենի բարձրագույն շրջանային դատարանի (Oberlandesgericht Dresden) 2009թ. փետրվարի 18-ի թիվ 11 Sch. 07/08 որոշումը (*ճանաչումը կարող է մերժվել, միայն եթե վճիռն այլ արդյունք կարող էր ունենալ*):

Մյուս կողմից, սակայն, անկախության, անկողնակալության և որակավորման չափանիշներին չհամապատասխանող արբիտրի կողմից կամ վերջինիս մասնակցությամբ կայացված վճիռը վիճարկման առարկա դարձնելու համար օբյեկտիվորեն անհրաժեշտ է օրենսդրորեն հստակ սահմանված հիմքերի առկայությունը: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ մի շարք երկրների օրենսդրական կարգավորումներ նշված հիմքերով մասնավորապես վճռի չեղյալ ճանաչման հնարավորություն ուղղակիորեն նախատեսում են: Օրինակ՝ Շվեդիայի արբիտրաժային ակտի 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ արբիտրաժային վճիռը կողմի դիմումով պետք է չեղյալ ճանաչվի, եթե արբիտրն իրավասու չէր գործը քննել 7-րդ և 8-րդ հոդվածներով նախատեսված՝ արբիտրի գործունակությանը, անկախությանը ու անկողնակալությանը ներկայացվող պահանջներին չամապատասխանելու պատճառով: Նման հնարավորություն է նախատեսված նաև Ամերիկայի Միացյալ Նահանգների Դաշնային արբիտրաժային ակտի 10-րդ հոդվածով¹: Որոշ դատարաններ նույնպես հայտնել են այն դիրքորոշումը, որ կողմը, որին արբիտրաժային տրիբունալի ձևավորման/համապատասխան արբիտրի նշանակման ժամանակ հայտնի չի եղել արբիտրի անկախության և անկողնակալության բացակայության հանգամանքը, իրավունք ունի հետագայում պահանջելու չեղյալ ճանաչել արբիտրաժային վճիռը²:

Այդուհանդերձ, նույնիսկ այն երկրները, որոնք վճռի չեղյալ ճանաչման առնչությամբ ունեն նման առաջադիմական կարգավորումներ, նույն հիմքերով վճռի կատարումը և ճանաչումը մերժելու հնարավորություն ուղղակի կերպով չեն նախատեսում: Այս կապակցությամբ Շվեյցարիայի Դաշնային տրիբունալն արտահայտել է այն դիրքորոշումը, որ ամեն մի ընթացակարգային խախտում չէ, որ կարող է ինքնաբերաբար հանգեցնել վճռի ճանաչման և կատարման մերժմանը, նույնիսկ եթե նման խախտումը հնարավոր է՝ հանգեցնել վճռի չեղյալ ճանաչմանը: Վճռի ճանաչման և կատարման մերժման համար անհրաժեշտ է Շվեյցարիայի հանրային կարգի ընթացակարգային հիմնարար սկզբունքների խախտում, որը խաթարում է արդարադատության էությունը³: Շվեդ մասնագետ Հյոմանն էլ արտահայտել է այն տեսակետը, որ անկախության և կողմնակալության չափանիշները պետք է լինեն նույնը՝ անկախ նրանից, թե դրանք կիրառվում են վճիռը չեղյալ ճանաչելու, թե բացարկի հարցը լուծելու ժամանակ⁴: Այսպիսով կարելի է եզրակացնել, որ վճռի ճանաչման և կատարման մերժման համար մոտեցումն ու չափանիշներն ավելի խիստ են, քան վճիռը չեղյալ ճանաչելու դեպքում, իսկ ավելի նվազ խիստ կամ չեղյալ ճանաչելու փուլում կիրառելի չափանիշին համարժեք՝ արբիտրին բացարկ հայտնելու դեպքում:

Ամեն դեպքում համընդհանուր մոտեցումը մնում է այն, որ քննարկվող հիմքերով վճռի չեղյալ ճանաչումը բացառիկ է⁵, և որպես կանոն դատարանները հակված չեն երկարատև ու ծախսատար արբիտրաժային վարույթի արդյունքում կայացված վճիռը չեղյալ ճանաչել այն պատճառով, որ արբիտրաժում պարտված կողմի կար-

¹ Նախատեսում է արբիտրի ակնհայտ կողմնակալության, կոռուպցիայի, ինչպես նաև արբիտրաժային վարույթը սխալ կազմակերպելու առնչությամբ ունեցած մեղավորության դեպքում վճռի չեղյալ ճանաչման հնարավորություն:

² Տե՛ս, օրինակ, Ֆրանսիայի վերաքննիչ դատարանի 1996թ. դեկտեմբերի 18-ի որոշումը:

³ Տե՛ս, օրինակ, Chrome Res. SA ընդդեմ Léopold Lazarus Ltd գործով Շվեյցարիայի Դաշնային տրիբունալի 1978թ. փետրվարի 8-ի որոշումը, Առևտրային արբիտրաժի ամենամյա հանդեսի XI-րդ խմբագրություն 1986, էջեր 538, 540

⁴ **Լարշ Հյոման**, «Շվեդիայի արբիտրաժային օրենքը. պրակտիկան և ընթացակարգը», Juris Publishing 2003, էջ 223:

⁵ **Կայ Հոբեր**, «Միջազգային առևտրային արբիտրաժը Շվեդիայում», Oxford University Press 2011, էջ 326:

ծիքով արբիտրը կողմնակալ է եղել¹: Այսպիսով, հաշվի առնելով վճռի չեղյալ ճանաչման, ճանաչման և կատարման փուլերում անկախության, անկողմնակալության բացակայության և/կամ որակավորման անհամապատասխանության հիմքերով արբիտրի իրավասության վիճարկման դժվարությունները, գործնականում հազվադեպ են դեպքերը, երբ նշված հիմքերով վճիռը չեղյալ ճանաչվի, կամ մերժվեն դրա ճանաչումն ու կատարումը: Հետևաբար, արբիտրի անկախության և անկողմնակալության վերաբերյալ հիմնավոր կասկածների առկայության կամ կողմերի համաձայնությամբ սահմանված որակավորմանը չհամապատասխանելու դեպքում նպատակահարմար է արբիտրին վարույթից հեռացնել հնարավորինս վաղ՝ արբիտրին բացարկ հայտնելու եղանակով, իսկ եթե վճիռն արդեն իսկ կայացվել է՝ վճիռը նշված հիմքերով չեղյալ ճանաչել: Հակառակ պարագայում, հաշվի առնելով վճռի ճանաչման և կատարման մերժման կապակցությամբ քննարկված գործնական բարդությունները, տվյալ վարույթում հաջողության հասնելը քիչ հավանական է:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ НЕЗАВИСИМОСТИ И БЕСПРИСТРАСТНОСТИ АРБИТРОВ В КОММЕРЧЕСКОМ АРБИТРАЖЕ

Парандзем Микаелян

*Старший специалист Департамента по защите интересов РА
в международном арбитраже и других международных судах,
Аппарат Премьер-министра РА*

В статье анализируются порядок и особенности отвода арбитра в ходе арбитражного разбирательства, а также исследуются возможности оспаривания решения или отказа в его признании и исполнении из-за отсутствия у арбитра независимости, беспристрастности и/или несоблюдения квалификационных требований, согласованных сторонами спора. В конечном итоге это предполагает, что в случае обоснованных сомнений в беспристрастности и независимости арбитра или несоблюдения квалификационных требований, согласованных сторонами спора, заинтересованная сторона должна поднять вопрос и отстранить арбитра от разбирательства при первой возможности путем отвода арбитра. В случае, если арбитраж завершился и было вынесено решение, заинтересованная сторона должна стремиться к оспариванию арбитражного решения. Между тем, высокий порог отказа в признании и исполнении по вышеупомянутым основаниям делает иск нецелесообразным.

¹ Պարի Բ. Բորն, «Միջազգային արբիտրաժ. իրավունքը և պրակտիկան», Wolters Kluwer, 2-րդ հրատարակություն, էջ 331:

CERTAIN ISSUES OF INDEPENDENCE AND IMPARTIALITY OF ARBITRATORS IN COMMERCIAL ARBITRATION

Parandzem Mikayelyan

Senior Specialist, Department for representation of RA interests in international arbitration and other international courts, Office of the Prime Minister

The article analyzes the manner and characteristics of challenging an arbitrator in the course of arbitral proceedings, as well as explores the possibilities of setting aside the award or refusing its recognition and enforcement for the lack of arbitrator's independence, impartiality, and/or non-compliance with the qualification requirements agreed to by the disputing parties. It ultimately suggests that in case of justifiable doubts as to the impartiality and independence of an arbitrator or the latter's non-compliance with the qualification requirements agreed to by the disputing parties, the interested party should raise the issue and remove the arbitrator from the proceeding at the earliest possibility by way of challenging the arbitrator. In the event the arbitration has concluded and an award has been rendered, the interested party should seek to set aside the award. Meanwhile, the high threshold for refusing the recognition and enforcement on the above-mentioned grounds makes the action impracticable.

Բանալի բառեր – արբիտր, անկախություն, անկողմնակալություն, բացարկ, արբիտրաժային տրիբունալի վճիռ, չեղյալ ձանաչել, ձանաչել և կատարել

Ключевые слова: арбитр, независимость, беспристрастность, отвод, решения арбитражного суда, оспаривание, признание и исполнение

Key words: arbitrator, independence, impartiality, challenge, arbitral award, set-aside, recognition and enforcement